

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2017 թվականի N 331-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից օգտագործվող Լամբրոն համակարգի ծրագրային վերազինման, սպասարկման, հաշվետվողականության բարձրացման, թարմացման, աշխատակիցների վերապատրաստման, ուսուցողական ձեռնարկների ստեղծման, համակարգի վերածրագրավորման, շարժական սարքավորումների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի ապրիլի 22-ի ՆԿ-50-Ն կարգադրության հավելվածի 10-րդ կետով սահմանված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ինտեգրման հետ կապված խնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը 2017 թվականին հատկացնել 22,000.0 հազ. դրամ, այդ թվում՝ առաջին կիսամյակում՝ 22,000.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «ոչ նյութական հիմնական միջոցներ» հոդվածով):

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1313-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Կ. Կարապետյան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թվականի
մարտի 30-ի N 331 - Ն որոշման

Աղյուսակ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.48 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)					
		ոչ ֆինանսական ցուցանիշներ			ֆինանսական ցուցանիշներ		
		առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի
ՄԱՍ Բ: Կառավարչական հիմնարկի անմիջական գործունեության արդյունքները							
1. Անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ցուցանիշները							
Ծրագրային դասիչը		<u>Անվանումը</u> Մանրամասնորեն անվտանգության բնագավառում քաղաքականության մշակման, վերահսկողության և աջակցության ծառայություններ					
1008	ԿՀ 01	<u>Նկարագրությունը</u> Մանրամասնորեն անվտանգության վերահսկողության քաղաքականության մշակման և դրա կատարման համակարգման, պետական ծրագրերի պլանավորման, մշակման, իրականացման և մոնիթորինգի (վերահսկման) ծառայություններ					
Քանակական		Ծրագրի թարմացում	1	1	1		
Որակական		Մշակված չէ	X	X	X		
Ժամկետայնության		01.01.2017 թ. - 31.12.2017 թթ.					
		Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)	X	X	X	22,000.0	22,000.0 22,000.0
<u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u> 1008 Մանրամասնորեն անվտանգության բնագավառում քաղաքականության մշակման, վերահսկողության և աջակցության ծառայություններ							
<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u> Մանրամասնորեն անվտանգության ապահովում և որակի բարելավում							
<u>Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը (անվանումները)</u> ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն							

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (բաժինը/խումբը /դասը)	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)
ծրագիրը	միջոցառումը			ՀՀ 2017 թ. պետական բյուջեի (հազ. դրամ)
1008			Ծրագիր	22,000.0
			Սննդամթերքի անվտանգության բնագավառում քաղաքականության մշակման, վերահսկողության և աջակցության ծառայություններ	
			Ծրագրի նկարագրությունը	
			Սննդամթերքի անվտանգության վերահսկողության քաղաքականության մշակման և դրա կատարման համակարգման, պետական ծրագրերի պլանավորման, մշակման, իրականացման և մոնիթորինգի (վերահսկման) ծառայություններ	
			Վերջնական արդյունքի նկարագրությունը	
			Սննդամթերքի անվտանգության ապահովում և որակի բարելավում	
			Քաղաքականության միջոցառումներ. Ծառայություններ	22,000.0
	ԿՀ 01		Սննդամթերքի անվտանգության բնագավառում քաղաքականության մշակման, վերահսկողության և աջակցության ծառայություններ	
			Մատուցվող ծառայության նկարագրությունը	
			Լամբրոն համակարգը ծառայության կողմից կիրառվող էլեկտրոնային կառավարման միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգ է, որն սպասարկում է ծառայության հիմնական գործառնությունների կատարման բոլոր փուլերում	
			Ծառայություն մատուցողի անվանումը	
			ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ
 N 12 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն						
(ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման)						
01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ						
Բաժին N 11 Խումբ N 01 Դաս N 01						
(ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման)						
Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման	Անվանումը	Գնման ձևը	Չափի միավորը	Միավորի գինը	Քանակը (դրամ)	Ընդամենը՝ գումարը (հազ. դրամ)
	Ծառայություններ					22,000.0
72261100/1	Ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ	ՇՀ	դրամ	22,000.0	1	22,000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ